Պարույր Սևակ

Սիրտս նման է

Ա՛խ, սիրտս նաև նման է կարծես...
Նման է կարծես նա մի թութակի,
Որ ո՛ղջ ժամանակ նույն բանն է ասում.
-Ես քեզ եմ ուզում...
Նման է կարծես նա մի ջութակի,
Որ միա՛կ լարով յոթ լարից շատ է
Ազդում ու հուզում...
Նման է կարծես մի ջինջ վտակի,
Որ տարբե՛ր հունով, բայց դեպի քեզ է
Շարունակ վազում...
Նման է կարծես մի պատատուկի,
Որ գոտու նման փաթաթվում է քեզ
Եվ շա՛տ է սազում...
Նման է կարծես մի խոր հատակի,
Որ ուրիշներին փետուրի նման պահում է վերև
Եվ միայն քե՛զ է իր խորքը սուզում...

04.II.1954թ.
Մոսկվա